Ա. Ռ Ա. Ջ Ա. Բ Ա. Ն

«Հայ ժողովրդի պատմության» ութերորդ հատորն ընդգրկում է 1941—1965 թվականները։ Սովետական Միության ժողովուրդների պատմության այդ ժամանակամիջոցը հատկանշվում է 1941—1945 թվականների Հայրենական մեծ պատերազմով, եռապատերազմյան ժամանակաշրջանի խաղաղ շինարարության վիթխարի հաջողություններով. ավարտվեց սոցիալիզմի վերջնական կառուցումը և ծավալվեց կոմունիզմի շինարարությունը։

Ֆաշիստական Գերմանիան, 1941 թվականի հունիսի 22-ին հարձակվելով Սովետական Միության վրա, նպատակ ուներ ջախջախել Կարմիր բանակը, ոչնչացնել սովետական պետությունը, տիրել մեր հայրենիքին ու ստրկացնել նրա ժողովուրդներին։

Կոմունիստական կուսակցության կոչով սովետական ժողովուրդը ելավ Հայրենական մեծ պատերազմի։

Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին հայ ժողովուրդը նույնպես ակտիվորեն մասնակցեց Հայրենական մեծ պատերազմին։ Ստեղծվեցին հայկական հինգ դիվիզիաներ, որոնք իրենց դրոշները փառքով օծեցին ռազմի դաշտում։ Բացի դրանից, Կարմիր բանակի մյուս միավորումների կազմում թշնամու դեմ մարտնչում էին հարյուր հազարավոր հայ ռազմիկներ։ Թիկունքում քրտնաջան աշխատում էին Հայաստանի բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և մտավորականությունը։

Հայ ռազմիկներին կարելի էր հանդիպել պատերազմի բոլոր ռազմաճակատներում, զորքերի բոլոր տեսակների մեջ։ Նրանք հերոսությամբ և անձնազոհությամբ պաշտպանեցին սովետական հայրենիքը։ Հայ ժողովրդի ակտիվ մասնակցությունը ֆաշիզմի դեմ մղվող պայքարին արժանացավ ընդհանուր ճանաչման և բարձր գնահատականի դեռևս պատերազմի առաջին ամիսներին։ «Հայ ժողովուրդը Սովետական Միության ազատագրական պայքարի մարտական մասնակիցն է» առաջնորդող հոդվածում 1941 թվականի օգոստոսի 25-ին «Պրավդան» գրել է. «Հայ ժողովուրդը հաստատապես իր մարտական տեղն է գրավել իրենց անկախության և ազատության համար Սովետական Միության բոլոր ժողովուրդների մղած ընդհանուր պայքարում»։

Պատերազմում ցուցաբերած քաջագործությունների համար հայ ժողովրդի և Հայաստանում ապրող մյուս ժողովուրդների 103 քաջորդիներ արժանացան Սովետական Միության հերոսի կոչման, իսկ օդաչու Նելսոն Ստեփանյանը՝ Սովետական Միության կրկնակի հերոսի կոչման։ Մոտ 70 հազար ռազմիկներ պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով։

Ավելի քան 361 հազար աշխատավորներ պարգևատրվեցին «Կովկասի պաշտպանության» և «1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում աշխատանքային արիության համար» մեդալներով։ Հայ ժողովրդի 9 զավակների շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ֆաշիզմի դեմ մղված համընդհանուր պայքարում ակտիվ մասնակցություն ցուցաբերեց սփյուռքահայությունը։ Չնայած դաշնակցականների հայրենադավ ոտնձգություններին, սփյուռքահայության հոծ զանգվածները և առաջադիմական կազմակերպությունները Սովետական Միության հաղթանակի մեջ էին տեսնում հայ ժողովրդի և Հայաստանի հարատևման երաշխիքը։ Տարագիր հայության ապագան նրանք կապում էին Սովետական Հայաստանի հետ։ Սփյուռքահայությունը ակտիվորեն մասնակցեց ֆաշիզմի դեմ ծավալված դիմադրական շարժմանը։ Նրա շատ զավակներ մարտնչում էին դաշնակիցների բանակներում։

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո սովետական ժողովուրդը, այդ թվում հայ ժողովուրդը, ձեռնամուխ եղավ խաղաղ շինարարական աշխատանքի։ Խնդիր դրվեց ամենակարճ ժամանակամիջոցում վերացնել պատերազմի պատճառած վնասները, վերականգնել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը, զարգացնել, ավելի բարձր աստիճանի հասցնել սոցիալիստական էկոնոմիկան և կուլտուրան, իրականացնել սոցիալիզմի վերջնական հաղթանակը։

Այդ ուղղությամբ ետպատերազմյան հնգամյակներում վիթխարի խնդիրներ նախատեսվեցին, որոնց իրագործման համար հերոսական պայքարի ելան մեր հայրենիքի բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և մտավորականությունը։

Չորրորդ հնգամյա պլանը (1946—1950) ետպատերազմյան խաղաղ շինարարության առաջին հեռանկարային պլանն էր։ Այն նախատեսում էր վերականգնել և զգալիորեն գերազանցել ժողովրդական տնտեսության նախապատերազմյան մակարդակը։ Մոբիլիզացնելով իր ուժերը, սովետական ժողովուրդը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հաջողությամբ կատարեց չորրորդ հնգամյա պլանը։ Արդյունաբերության գծով պլանի առաջադրանքներն իրականացվեցին 4 տարի 3 ամսում։ Առանձնապես արագ զարգացում ապրեց քիմիական և շինանյութերի արդյունաբերությունը, ինչպես նաև էներգետիկան, սննդի և թեթև արդյունաբերությունը։ Կառուցվեցին և շահագործման հանձնվեցին արդյունաբերական տասնյակ նոր ձեռնարկություններ։ Որոշ հաջողություններ ձեռք բերվեցին սոցիալիստական գյուղատնտեսության բնագավառում։ Զգալի չափով բարձրացավ աշխատավորների կենսամակարդակը։

Հանրապետության աշխատավորության անձնվեր ջանքերի շնորհիվ գործադրվեց նաև հինգերորդ հնգամյա պլանը (1951—1955)։ Այդ տարիներին Հայաստանում կառուցվեց և շահագործման հանձնվեց 41 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն, զգալի չափով ավելացավ արդյունաբերական արտադրանքը, աճեց բանվոր դասակարգը, բարձրացավ նրա կուլտուր-տեխնիկական մակարդակը։ Կուրս վերցվեց հաղթահարելու հանրապետության արդյունաբերության զարգացման միակողմանիությունը, ծավալելու ոչ էներ-

դասար արդյունաբերական ձեռնարկությունների, հատկապես մեքենաշինության, սարքաշինության, ճշգրիտ չափիչ գործիքաշինության և թեթև ու սննդի արդյունաբերության զարգացումը։ Սովետական Հայաստանի մի շարք շրջանների ու կոլտնտեսությունների ձեռք բերած հաջողությունները ներկայացվեցին նաև Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում։ Հանրապետության աշխատավորները մեծ օգնություն ցույց տվեցին Սովետական Միությունում կառուցվող խոշոր ջրանցքների ու էլեկտրակայանների շինարարությանը, խամ ու խոպան հողերի յուրացմանը։ Հետագա առաջընթաց ապրեցին Սովետական Հայաստանի ժողովրդական կրթությունը, գրականությունը, արվեստն ու գիտությունը։

Ամփոփելով մեր երկրում կոմունիստական շինարարության արդյունքները, ՍՄԿԿ XX համագումարը (1956, փետրվար) նշեց, որ ՍՍՀՄ ներքին դրությունը բնութագրվում է հասարակական արտադրության անընդհատ վերելքով, սովետական հասարակարգի ամրապնդմամբ և ժողովրդի բարեկեցության բարելավմամբ։ Համագումարի աշխատանքներում կարևորագույն տեղ գրավեց մարքսիզմ-լենինիզմին խորթ անհատի պաշտամունքի և նրա վնասակար հետևանքների հաղթահարման հարցը։ Խիստ քննադատվեց Ի. Վ. Ստալինի անձի պաշտամունքը, բացահայտվեցին այդ երևույթի վնասակար հետևանքները։ Համագումարը միաժամանակ նշեց, որ Ի. Վ. Ստալինը սովետական երկրի համար օգտակար շատ բան է արել։ Համագումարը ցուցում տվեց ծավալուն պայքար սկսել անհատի պաշտամունքի վնասակար հետևանքները հաղթահարելու, կուսակցական կազմակերպությունների աշխատանքի որակը բարձրացնելու, սովետական օրինականությունը պաշտպանելու, ազգային քաղաքականության բնագավառում թույլ տրված շեղումները վերացնելու համար։ Այդ խնդիրներն իրենց արտացոլումը գտան ՍՄԿԿ Կենտկոմի 1956 թվականի հունիսի 30-ի՝ «Անհատի պաշտամունքը և նրա հետևանքները հաղթահարելու մասին» որոշման մեջ։ Լայն հնարավորություններ ստեղծվեցին ժողովրդական զանգվածների նախաձեռնության և ակտիվության զարգացման համար։

Այդպիսի իրադրության մեջ սովետական ժողովուրդը ձեռնամուխ եղավ ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման վեցերորդ հնգամյա պլանի (1956—1960) իրագործմանը։ Ամբողջ երկրում ծավալվեց կոմունիստական աշխատանքի հզոր շարժում, որի մեջ ընդգրկվեցին միլիոնավոր աշխատավորներ։ Դա սոցիալիստական մրցության նոր, ավելի բարձր փուլն էր։ 1956—1958 թվականներին* Հայաստանում կարևոր հաջողություններ ձեռք բերվեցին արդյունաբերության, սոցիալիստական գյուղատնտեսության, ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի բոլոր բնագավառներում։ Գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերած հաջողությունների համար ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության 1958 թվականի դեկտեմբերի 29-ի հրամանագրով Հայկական ՍՍՀ-ն պարգևատրվեց Լենինի շքանշանով։ Կառավարության այդ բարձր պարգևին հանրապետության աշխատավորները պատասխանեցին աշխատանքային նոր խանդավառությամբ։

Ամփոփելով Սովետական Միության պատմական զարգացման գլխավոր

* 1959 թվականին ընդհատվում է 6-րդ հնգամյակը և սկսվում է 1959—1965 թվականների յոթնամյակը։

արդյունքները, կուսակցության XX համագումարը ուրվագծեց ՍՍՀՄ-ում կոմունիստական շինարարության կոնկրետ խնդիրները, իսկ XXI համագումարը (1959, հունվար-փետրվար) նշեց, որ մեր երկրում սոցիալիզմը հաղթանակել է լիովին ու վերջնականապես։ Այդ կարևոր հետևությունը հիմնված է ինչպես ՍՍՀՄ ներքին կյանքում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական մեծ վերափոխությունների, այնպես էլ համաշխարհային ասպարեզում սոցիալիստական սիստեմի և կապիտալիստական աշխարհի ուժերի արմատական փոփոխությունների վերլուծության վրա։ Այդ նշանակում է, որ աշխարհում այլևս չկա այնպիսի մի ուժ, որը կարողանա բռնի կերպով վերականգնել կապիտալիզմը մեր երկրում։

Սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակով Սովետական Միությունը թևակոխեց իր զարգացման նոր՝ կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանը։ Որպես այդ ժամանակաշրջանի հիմնական խնդիրներ կուսակցությունը առաջադրեց կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը, սոցիալիստական հասարակական հարաբերությունների զարգացումն ու կատարելագործումը, սովետական մարդկանց դաստիարակումը կոմունիստական գաղափարախոսությամբ։

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման ճանապարհին առաջընթաց քայլ էր ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանը (1959—1965)։

Հայ ժողովրդի կյանքում կարևոր իրադարձություն էր Հայաստանի կոմունիստական կուսակցության ստեղծման և Հայաստանում սովետական իշխանության հաստատման 40-ամյակի տոնակատարությունը։ Հայ ժողովուրդը ամփոփեց սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում անցած 40 տարում իր ձեռք բերած մեծ հաջողությունները։ Այդ տարիներին Հայաստանում կառուցվել էին շուրջ 500 արդյունաբերական ձեռնարկություններ։ 1913 թվականի համեմատությամբ արդյունաբերության արտադրանքն ավելացել էր 68,2 անգամ։ Մեծ հաջողություններ էին ձեռք բերվել ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում, ժողովրդի բարեկեցության, մշակույթի ու դիտության բնագավառներում։

ՍՄԿԿ XXII համագումարում (1961, հոկտեմբեր) ընդունված կուսակցության նոր ծրագիրը և համագումարի որոշումները նոր հեռանկարներ բացեցին կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման պայքարում միութենական հանրապետությունների հնարավորությունների ավելի լայն օգտագործման համար, նպաստեցին սովետական ժողովուրդների մերձեցմանն ու նրանց միջև համագործակցության ու բարեկամության հետագա ամրապնդմանը։

Հայաստանի աշխատավորության հերոսական աշխատանքի ու պայքարի յոթ տարիների ընթացքում հանրապետության էկոնոմիկան և մշակույթը հետագա զարգացում ապրեցին, աղգաբնակչության կենսամակարդակը զգալիորեն բարձրացավ։ Սովետական մյուս հանրապետությունների հետ միասին Հայաստանը առաջընթաց քայլ կատարեց կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման ճանապարհին։ Այդ տարիներին արդյունաբերության արտադրանքն ավելացավ 2,2 անգամ, ստեղծվեցին էլեկտրոնիկայի, ռադիոէլեկ-

տրոնիկայի, հաշվիչ մեքենաների և արդյունաբերության մի շարք այլ ճյուղեր։ Ցոթնամյակի վերջում Հայաստանի արդյունաբերության 130 արտադրատեսակներ արտահանվում էին արտասահմանյան 70 երկրներ։

Որոշ հաջողությունների հասան սոցիալիստական գյուղատնտեսության աշխատողները։ Բարձրացավ գյուղատնտեսական մի շարք կուլտուրաների՝ հացահատիկի, շաքարի ճակնդեղի բերքատվությունը, աճեց անասունների գլխաքանակը, բարձրացավ մթերատվությունը։ Սակայն, ընդհանուր առմամբ, գյուղատնտեսությունը դեռևս ետ էր մնում։

1965 թվականին Սովետական Հայաստանի բնակչության թիվը հասավ 2,2 միլիոնի, որը 500 հազարով ավելի էր, քան 1959 թվականի հունվարին։ Բնակչության ավելացումը տեղի էր ունեցել բնական աճի, ինչպես նաև հայրենադարձության հաշվին։

«Հայ ժողովրդի պատմության» սույն հատորում լուսաբանված է Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության պայքարը ժողովրդական տնտեսության պլանների կատարման և գերակատարման համար։ Հատուկ ուշադրություն է դարձված եղբայրական սովետական հանրապետությունների աշխատավորների հետ Հայաստանի աշխատավորության սոցիալիստական մրցության հարցերի լուսաբանմանը։ Ցույց են տրված Սովետական Հայաստանի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կապերն ու համագործակցությունը սովետական մյուս հանրապետությունների հետ, լուսաբանված է հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը։

Սովետական Հայաստանի պատմությունը շարադրված է ՍՍՀՄ պատմության հետ սերտորեն առնչված, սովետական ժողովուրդների բարեկամության և եղբայրական համագործակցության լույսի տակ։

Հատորում զգալի տեղ է հատկացված սփյուռքահայության պատմությանը։

* *
*

Հատորը պատրաստել է հեղինակային կոլեկտիվը հետևյալ կազմով. Աղաբաբյան Ս. Բ., Բաբայան Լ. Մ., Գեղամյան Գ. Մ., Գրիգորյանց Ա. Կ., Գյոդակյան Գ. Շ., Դալլաքյան Կ. Լ., Խալաթյան Լ. Ս., Խալեյան Ե. Մ., Խարմանդարյան Ս. Վ., Խուդավերդյան Կ. Ս., Խուրշուդյան Լ. Ա., Հակոբյան Ա. Մ., Հարությունյան Ա. Բ. (Հարենց), Հարությունյան Վ. Մ., Մնացականյան Ա. Ն., Սարգսյան Մ. Ս., Ստեփանյան Գ. Խ.։

Կարևոր իրադարձությունների ժամանակագրությունը կազմել է Շ. Ռ. Հարությունյանը, իսկ մատենագրությունը՝ Գ. Մ. Գեղամյանը։

Քարտեզները կազմել են Ս. Մ. Դուլյանը և Լ. Հ. Վալեսյանը։ Հայկական դիվիզիաների մարտական ուղու սխեման պատրաստել է Գ. Ս. Բուռնազյանը։ Հատորում զետեղված նկարների մի մասը ինստիտուտին են տրամադրել ՀՍՍՀ ֆոտո-ֆոնո-կինո փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվը, Հայկական հեռագրական գործակալությունը և ՀՍՍՀ Հեղափոխության պետական թանգարանը։